


30.04.2015 19:45



Հարգելի՛ փաստաբաններ,
Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատը հրավիրում է մասնակցելու 2015 թվականի
մայիս ամսվա վերապատրաստման դասընթացներին:
Հաշվի առնելով այն, որ հիմնականում
աշխատանքային օրվա ավարտին է դասընթացը
լինելու, ՀՀ փաստաբանների պալատը տրամադրելու
է Ձեզ սուրճ, թեյ և թեթև սնունդ:

Գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային
հաղորդագրություն ուղարկել
ani.gharibyan@advocates.am էլ. հասցեին՝ նշելով Ձեր
արտոնագրի համարը և հեռախոսահամարը:
Հ.Գ. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
18.12.2014թ. թիվ 35/8-Լ որոշմամբ նոր
խմբագրությամբ հաստատված Փաստաբանների
վերապատրաստման դասընթացներ անցնելու
ժամաքանակի և կարգի համաձայն՝

1. Յուրաքանչյուր կիսամյակի (վեց ամսվա) համար
փաստաբանը Կարգով նախատեսված ժամկետում և
ընթացակարգով պետք է անցնի 12 (տասներկու)
ակադեմիական ժամ (այսուհետ՝ ժամ, 1 (մեկ)
ակադեմիական ժամը հավասար է 40 (քառասուն)
րոպեի) վերապատրաստում: Կիսամյակի հաշվարկը՝
ա) սկսվում է հունվար ամսից և ավարտվում
հունիսին (ներառյալ), կամ բ) սկսվում է հուլիս ամսից
և ավարտվում դեկտեմբերին (ներառյալ):
2. Փաստաբանի վարքագծի կանոնները
(դեոնթոլոգիա)» թեմայով դասընթացների առնվազն
4 ժամ մասնակցությունը պարտադիր է: Բեռնել
կարգը, Բեռնել ժամանակացույցը

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
վերապատրաստման հարցերով համակարգող՝
Անի Ղարիբյան

ani.gharibyan@advocates.am